

րէնի քննութիւնները հայ հոգաբարձութեան առջեւ:

Ճօքչանի հայ վարժարանները ատեն մը ունեցած են շատ փայլուն վիճակ: Պահ մը նոյնիսկ անոնք ունեցած են վեց դասարաններ: Պետրոս քահ. Մամիկոնեան, որ պաշտօնավարած է Ճօքչան, իր մէկ երկասիրութեանը մէջ (Ռուսմահայոց ներկայն եւ ապագայն, 1895, Կալաց, էջ 61) խօսելով դպրոցին անկման պատճառներուն վրայ, կ'ըսէ թէ առաւելապէս այդ անկումը պարտական ենք եկող գացող ուսուցիչներուն միջակ հմտութեան, եւ անոնց մանկավարժական ծանօթութիւններէ զուրկ ըլլալուն: Նոյն քահանան կ'աւելցնէ թէ ուսուցիչները Զանազիր շէն եղած իրենց խնամքին յանձնուած սաներուն մարսել տալ հայ լեզուն, այնպէս որ հազիւ դպրոցը թողած՝ անոնք սկսած են մոռնալ իրենց սորված հայերէնը:

1892-ին վարժարանի ուսուցչապետութեան կը կոչուի Վահրամ Մամիկոնեան: Հըմուտ հայերէն, Փրանսերէն, տաճկերէն, անգլիերէն, յունարէն, լատիներէն, իտալերէն, ռումաներէն եւ ուրիշ լեզուներու, կը յաջողի քիչ ատենէն բարւոք վիճակի մը վերածել զըզրոցը, շնորհիւ մանաւանդ իր մանկավարժական ըմբռնումներուն: Մամիկոնեան երկար չի մնար սակայն կրթական ասպարէզի մէջ. կը հետեւի իրաւարանութեան, եւ այս նորեկ հայ երիտասարդը քիչ ատենէն այնքան համակրութիւն եւ համբաւ կը ստեղծէ՝ որ կը յաջողի դիրքը զբաւել քաղաքական կեանքի մէջ ալ, դառնալով հետզհետէ քաղաքապետ, նահանգապետ, երեսփոխան, եւ եթէ վրայ չի հասներ իր մահը 1927-ին՝ աւելի բարձր դիրքերու պիտի տանէր զինք իր արժանիքը:

Ճօքչանի վերջին ուսուցիչը կ'ըլլայ Մանուէլ Միրախորեան, ու ասոր օրով է որ կը փակուին այս դպրոցին դուռներն ալ՝ զոյգ մը փառաւոր շէնք թափուր ձգելով:

ԿԵՌԱՅԻ ՄԷՋ

1818-ին հայաքաղաքը ազոց կրթութիւնը կը յանձնէ Զաքարիա Կապրուշեանի, որ 1794-ին Կեռլա ծնած եւ իր նախնական ուսումը հոն առնելէ յետոյ 1815-1817 Գարուպուրկի մէջ հետեւած էր աստուածաբանութեան: 1818-

1860 Կապրուշեան 42 տարի ուսուցչի պաշտօն վարած է Կեռլայի մէջ՝ կրթելով 2425 տղայ, որոնց մէջէն ելած են եկեղեցականներ, ուսուցիչներ, դատաւորներ, եւայլն: Ամէն օր 8 ժամ դասախօսութիւն կ'ընէր, 4 ժամ դպրոցը, 4 ժամ իր տունը: Խղճամիտ ուսուցիչ մը եղած է: Բացի զբաղան եւ դիտական գրքերէ հեղինակած է նաեւ դասագրքեր, ինչպէս հայհոնգար այբենարան մը, քրիստոնէական մը, եւայլն:

1860-ին Կեռլայի մէջ կը բացուի մանչ տըղոց որբանոցը ժողովրդապետութեանը օրով Խաչիկ Լուքաշեանի, որ 1804-ին Կեռլա ծնած եւ նախնական կրթութիւնը հոն ստանալէ յետոյ հետեւած էր Գարուպուրկի եւ Վիեննայի համալսարաններուն եւ 1828ին քահանայ ձեռնադրուած: 1856-ին ժողովրդապետ կարգուած Կեռլայի, Լուքաշ 1861-1876 ամբողջ տասըհինգ տարի վերատեսչութիւն ըրաւ հայաքաղաքի Ազգ. վարժարանին:

Նոյն շրջանի ուսուցիչներուն մէջ կայ նաեւ Գրիգոր Յիցեան, որ իրաւագիտութիւն ուսած էր Քլոսթ: 1849-էն մինչեւ իր մահը, 1889, ուսուցչութիւն ըրաւ Կեռլա, հասցնելով բազմաթիւ սաներ, որոնցմէ էլան եպիսկոպոս, երեսփոխան, փաստաբան, դատաւոր, բժիշկ, եւայլն: Իր ամբողջ գոյքը 40,000 Փիօրին կը տակեց մանչոց որբանոցին:

1863-էն սկսեալ երկար ատեն Կեռլայի մէջ ուսուցչի պաշտօն վարած է նաեւ Խաչիկ Սոնկոդեան, իմբադիրը Արմենիա ամսաթերթին եւ հեղինակ բանասիրական երկերու:

Հիմա, հայ դպրոցի մը ծաղրանկարը միայն կայ:

ԵՂԻՍԱԲԷԹՈՒՊՈՂԱՍՈՅ ՄԷՋ

Քաղաքին հին դիւանաթուղթերուն մէջ Հայր Գովրիկեան կը գտնէ արձանագրութիւն մը, որուն համաձայն 1730 Ապրիլ 11-ին կ'որոշուի աղջկանց վարժարան մը բանալ եւ կ'ենթադրէ թէ անկէ առաջ արդէն բացուած էր մանչոց վարժարան:

Ըլլայ մանչերու դպրոցին մէջ, ըլլայ աղջկանց, հայ լեզուով էին դասաւանդութիւնները, որովհետեւ հունգարերէնի տեղեակ չէին Միսիթարեան հայերը, որոնք կը դասախօսէին հոն: Մէկ քանի տասնամեակ վերջն է որ